Այս քաղաքում բնակւում էին չորս ազգութիւններ՝ հայ, թուրք, ասորի եւ հրէայ. իւրաքանչիւր ազգութիւն զետեղուած էր առանձին թաղերում: Հայերը ունէին երկու եկեղեցի, իսկ ասորիները՝ մէկ: Հին քաղաքը արժանի էր իր կոչմանը, այստեղ, կարծես, մի քանի քաղաքներ շինուած էին մինը միւսի վրայ: Նոր շէնք կառուցանելու համար նիւթեր պէտք չէին. քանդում էին գետինը եւ հողի տակից դուրս էին բերում ահագին քանակութեամբ աղիւս, կոփածոյ քարեր, եւ շատ անգամ բացւում էր մի ընդարձակ, ստորերկրեայ բնակարան: Որքա՜ն փորձանքներ, որքա՜ն յեղափոխութիւններ պէտք է կրած լինէր այդ քաղաքը. որքա՜ն ազգեր այնտեղ բնակուել եւ անհետացել էին. իսկ հայը, նրա նախկին բնակիչը, դեռ մնում էր: Արաբներից մնացել էր մի լայնատարած գերեզմանատուն միայն, գեղեցիկ զարդարած տապանաքարերով:

Քաղաքի բոլորովին սպառուած մի անկիւնումն էր գտնւում քեռուս տունը, մեծ հեղեղատի ափի մօտ: Այդ հեղեղատը գարնան անձրեւների ժամանակ յորդանում էր, եւ քանդելով աւերակները, բերում էր իր հետ զանազան հնութիւններ: Ես շատ ուրախ էի լինում, երբ հեղեղը փոքրանում էր, որովհետեւ մր դրացի երեխաների հետ գնում էինք գետի ափերի մօտ եւ աւազների միջից գտնում էինք հին դրամներ, կանանց զարդեր, եւ վաճառելով հրէայ ոսկերիչներին, փող էինք ստանում:

Հայերի տները թէեւ փոքրիկներ էին, բայց հովանաւորուած պարտէզներով եւ ծառերով, գեղեցիկ տեսք ունէին: Բնակարանը, ասում են, խիստ խորին կապ ունի մարդու կեանքի ու բնաւորութեան հետ: Այս մտքով, հայերի տների ձեւը եւ նրանց ներքին ու արտաքին դիրքը, ոչ միայն մեծ նշանակութիւն ունէին բնակիչների ճաշակի մասին, այլ առաւելապէս արտայայտում էին նրանց վիճակը եւ հասարակական դրութիւնը: Տները շատ սերտ եւ անմիջական կերպով կցած էին մինը միւսի հետ, այնպէս, որ տանիքերի վրայով կարելի էր հայոց թաղի մի ծայրից մինչեւ միւսը գնալ: Բոլոր տները ունէին գաղտնի հաղորդակցութիւն: Այդ հաղորդակցութիւնը պահպանւում էր զանազան ծակերի միջոցով, որ բացուած էին մի տանից միւսի մէջ: Ծակերը բացուած էին աննկատելի տեղերում: Նրանցից շատերը այնքան նեղ էին, որ մի ձեռք միայն կարելի էր անցկացնել, եւ ծառայում էին աւելի բանաւոր հաղորդակցութեան համար: Երբ պատահում էր մի անսովոր դէպք, մի քանի րոպէի մէջ թաղի միւս ծայրում արդէն գիտէին: Ամէն մի լուր, ամէն մի խօսք, ծակերի միջոցով, կայծակի արագութեամբ տարածւում էր ամբողջ թաղի մէջ, առանց մի մարդ իր տանից դուրս գալու: Ծակերից շատերն այնքան մեծ էին, որ կարելի էր, մանաւանդ վտանգի ժամանակ, մի տան կայքը